

նին հետաքրքրական բան է: Բարեկ. Քահանայն Համամու զիւղովն անցնելով իջեաներ է մէկ տեղ և մօտը եկող մարդկանցէն լսելով, որ վարժապետն միշտ Բաքոսի կենացն կ'զարտակէ, կանչել կուտայ իւր մօտ այն զրուժեան մէջ, որ ոտքի վերայ կանգնելն կը զժուարանայ, և նորանէ ստորագրութիւն կանու, որ միւսանգամ այնքան չ'լամէ՝ որ ինքն զինքն մոռանայ: Այս է ահա նոյն քահանային աշխատանքը: Եւ ո՞վ է այն ընտիր վարժապետն, որ վարձուած է, և որոյ հոգատարութեամբն ուսումնարանն հսկայաբայլ առաջ պիտի երթայ, եթէ ոչ այն տարբարող յօղուած զրող և չափաւոր խմելու համար ստորագրութիւն տուող Արտազեանն, որոյ արբեցողութեան համար Պ. Խանաղեանցը որպէս զխաւոր վերատեսուչ և հիմնադիր ուսումնարանին գրած է եղել հոգարարձուաց արտաքսել զպրոցէն, իսկ հակառակ կանոնի և հակառակ Ա. Նահապետ Կաթողիկոսի Առնդակին միջամտեալ է այլ որ այն ուսումնարանի կարգազրուժեան մէջ, որոյ լիակատար իրաւունքը Ա. Նահապետ Հայրապետն յանձնած է յիշեալ պարոնին: Բայց թէ այսպիսի զբրպարտութիւնն, զոր գրել է Պ. Արտազեանցը Յովսէփի քահանային դէմ՝ բաւականին կարծեմ զժուար դայ Արժ. Հօրն, և սոյն ամագրի միջոցով արգարանալն և Արտազեանցի ստութիւնն ի դուրս հանելն իրան մեծ պարտք համարի. այսու ամենայնիւ այդ իւր կամքն է:

Մոռացայ ասել, որ Պ. Արտազեանցը ստորագրութիւնն տալէն յետոյ՝ գաւաթը թողած չափով է սկսած խմել, և զիշերներն չ'կարողանալով վերագտնեալ իւր սենեակն՝ զինելաճառաց մօտ է քնելիս եղեր. այսպէս քանի մի ժամանակ շարունակելէն յետոյ՝ քանի մի մարդէ կարողացեր է զրամներ առնել փոխարինարար, իբր թէ ուսումնարանէն իւր ռոճիկը ստանալէն յետոյ կ'տայ, և անյայտացեր է, կ'ասեն ոմանք: Իբր թէ ի Թիֆլիս:

Պատմեցին նոյնպէս՝ որ այս մի քանի օրերս Պ. Խանաղեանցն եկեր է Համամու ուսումնարանի հաշիւներն կարգի բերել, և վերագարծել է Աւարաբլիսայ, այնտեղի ուսումնարանի հաշիւներն ևս տեսնելու, խոստանալով որ շուտով ուղարկէ մէկ

լաւ վարժապետ, միայն մինչև նորա գալը պիտի երկու մեծ աշակերտ կառավարեն, որպէս զի ուսումնարանի դուռը չը փակուի: Այս էր ահա Համամուի ուսումնարանի վերայ ստացած տեղեկութիւնս:

Միւս առաւօտը ճանապարհս շարունակեցի և ժամը 10ին հասայ Աւարաբլիսայ զիւղն, ուր առաջին պարտքս եղև այնտեղի ուսումնարանին պցելութիւն գնալ: Մէկ ժամէն աւելի մնացի ուսումնարանի մէջ. աշակերտաց երեսին պարկեշտութիւն կը փայլէր, և պարզ համարձակասուսութիւնը ցոյց կտար իւրեանց դաստիարակաց արժանաւորութիւնը: Հայոց զիւղական ուսումնարանների մէջ հազիւ թէ գտնուի մէկ այնպիսի ուսումնարան, որոյ աշակերտներն կարողանան այսպէս կարգալ Ռուսերէն և թարգմանել համարձակ ճարտար էին նոյնպէս Հայոց լեզուի, Արօնագիտութեան, Սրբազան և Հայոց Պատմութեան մէջ, զրութիւններն Հայերէն և Ռուսերէն նոյնպէս բաւական զեղեցիկ էին. ահա այսպէս բաւական ժամանակ ուսումնարանի մէջ մնալէն յետոյ ուրխութեամբ սրտի դուրս ելայ, յայտնելով իմ խորին շնորհակալութիւնն Պ. Հիմնադրաց և Կառավարչաց, նմանապէս վարժապետաց Բարեկ. Արսէն քահանայ Տէր Սիմեօնեանցին և Պ. Խանաղեանցին իւրեանց անխոնջ աշխատութեանն Ազգի որդոց համար:

Աստուած տայ որ Պ. Խանաղեանցի պէսներն շատանան և ապրին մեզի համար, և միւս զիւղերն այս բարի օրինակին հետեւելով իւրեանց որդիքը բազաւորացնեն:

**Տ. Գ. Գ. Գ. Գ. Գ.**

ՕՐԻՈՐԳԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԳՊՐՈՑ  
Ի ԳՐԻԳՈՐԱՊՈԼ

**Իմ քաղաքս-Նիւտան Արարատ ամսագրոյ**

Մինչև ցայսօր լուծեան մէջ մնալով հետեւեալ տեղեկութիւնը, անհրաժեշտ պարտք համարեցի անձիս յերևան հանել զայն: Իննևտասներորդ դարուս մէջ Քիլիզորուպոյց քաղաքիս Հայագի փոքրիկ հօտ ժողովուրդը արդէն ճանաչելով ուսման յարգը ու արժէքը, և միանգամայն

մտածելով թէ անշուշտ պէտք է ուսումը հարգողն և կանանց սեռին՝ որպէս զի ատենով կրթեալ մայրեր ըլլան, միաբան խոհարարով ի 1868 ին խնդրապիւր մը ուղարկեցին Նորին Ա. Ն. հաստատութեան հետեւն շայն Ս. Տ. Գէորգայ Գի, զի բարեհաճեցի հրամայել իւրեանց յաղագս բանայոյ Օրիորդական Էնդեւոր դպրոց մը քաղաքիս մէջ: Նորին Ա. Ն. հաստատութեան ազգասէր հոգեւոր ստեղծութիւն ցուցեալ իւր անձին վրայ այսպիսի աստուածահաճոյ գործոյն դէմ՝ սիրով կրնդունէ նոցա խնդիրքը ու առանց ժամայաճառ լինելոյ՝ իւրով օրհնարանեալ Անդակաւ և Հայրապետական օրհնութեամբ կ'յայտնէ իւր հաճութիւնը առ այն Ակնկալու ազգայինք մեր՝ որոց զխաւորն էր զարդիս հանգուցեալ ազգասէր անձն Մինաս Տեսպոթեանց ընդունելն զայն աւետարելի Անդակ, ձեռն ի գործ եղն զպրոցը բանալու. և զայն նորարաց իմաստութեան տաճարը ըստ բարեհաճ կամաց Ազգասէր Ա. Ն. հաստատին "Մարտիան" անուամբ մեծարեցին: Եւ որովհետեւ ամենայն բարի գործը սկզբէն միշտ թշնամիներ կունենայ, ասոր դէմ ալ մեծամեծ արգելքներ հնդեղի նման յարեան կանգնեցան. սակայն արթուն Խնամարկութեամբ Նորին Ա. Ն. հաստատութեան, և օգնութեամբ Գերապատիւ Առաջնորդի Ա. Ի. Ժակիս Տ. Գէորգայ Այր Եպիսկոպոսի՝ փառք երկնի, ամենայն առապարք ի գաշտ փոխեցան և զժողովրդի ի դիրխնս, և բարեգրապէս շարունակուելով զպրոցիս ընթացքը՝ անցելոյ ամին 1870 Յունիսի 22 ին ի ներկայութեան հոգարարձուաց և Հայտազի ժողովրդականաց՝ բաւականին փառաւոր կերպիւ կատարուեցաւ աշակերտութեան հարցաքննութեան հանդէսը. ուրանոր զովելի յառաջագիտութիւն ցուցանելով օրիորդաց Հայոց լեզուին մէջ՝ մեծ խնդութիւն պատճառեցին թէ ծնողաց և թէ այլոց զգայուն սրտերու. փասն զի՝ ասկից երկու տարի յառաջ որ ի գրական սեռին Հայերէն խօսակցութիւնը և կարող գրելը բոլորովին անծանօթ էր, այժմ փոքր ի շատէ կիսօրին իւրեանց հայրենի լեզուաւ ուսումնաստուութեամբ Պ. Գէորգայ Մանդակունոյ և նորա պարկեշտուհի ամուսնոյ Լույցիս Գարամիզայեան. և կայ յոյս տարուէ տարի լաւ ևս յառաջագիտութիւն երեւի յօղուտ և ի խնդութիւն ազգիս Հարկաւ զարմանք չ'ընրեր լսողաց վրայ փոքր ի շատէ առաջ գնալը աշակերտութեան Հայերէն լեզուախօսութեան մէջ անդ՝ ուր որ արդէն հասարակեալ է Հայերէն խօսակցութիւնը, բայց աստանօր պէտք է մեծ բան համարել. փասն զի քաղաքիս մէջի Հայերը ատենով Տաճկաստանէն գաղթած ըլլալով՝ ինչպէս եղած է որ իւրեանց բնիկ հայրենի լեզուն իսպառ կորսնցնելով՝ Տաճկերէն կիսօրին իրար մէջ. ցաւելի բան, այն ցաւելի, կարծեմ՝ այսօրինակ շատ տեղեր կ'գտնուին մեր համայնքի կրթարք թէ Ռուսաստան և թէ այլ տեղութեանց մէջ. ուրեմն այժմեան փոքր ի շատէ լեզուախօսութիւնը տե-

ղոյս օրիորդաց, ազգեցութիւն պէտք է որ անէ ազգասէր լսողաց, Երանի թէ ամեն տեղ մեր եղբարքը սոյնօրինակ յարատե միաբանութեամբ ձեռք ձեռքի տուած Հայկական հոգեւոր աշխատելին ազգային օգտի համար, ոչ միայն լոկ խօսքերով՝ այլ և գործով և արգեանք, հարուստ եղաւարք ձեռն տալով ուսումնասիրաց, և ուսումնատաճները իւրեանց տաղանդ աննախանձարար բաշխելով ազգիս զաւակներուն. այն ատեն կարծեմ մեր ևս սակաւ առ սակաւ կ'կոխեմք այլոց ազգաց լուսաւորութեան այն աստիճանը, ուր որ այժմ՝ այլք արդէն լուսաւորութեան զրօշակը պարծանօր կ'չողացնեն. անհրաժեշտ պարտականութիւն է մեզ զարթնուլ թանձրութեան քնից նայել մեր չորս կողմը, ինչէր կ'ըլլան, որպիսի աշխատութեան մէջ կ'գտնուին այլք, ոչ թէ տարուէ տարի՝ ամսոյ ամիս, այլ օր աւուր յառաջանալու վրայ են, հաւաստի գիտելով՝ թէ ազգի մը պայծառանալուն ու զօրեղ ըլլալուն միակայն առիթ և միջոց ուսումն կրնալ հանդիսանալ, Շատ տեղ հասարակեալ խօսք եղած է և ես ակամջութիս գրեթէ լաճ ունիմ՝ որ կասնն՝ Վթէ ուսումնական անձինք ինչ ըրած են կամ ինչ օգուտ բերած ազգին, այնպիսիները՝ որ առանց փորձելու գատորութեան բովին մէջ իւրեանց խօսքերը կ'հանեն կնետեն, նոցա դէմ կ'զուրցնմ. ինչ անեն ուսումնականք, որ նոքա թէ և ուսում առած են, բայց միջոց ու հնարք չունենալուն զայն առաջ տանելու՝ կման ձեռքերը ծոցին, միմիայն ցաւակցութեան արձագանգներ հանելով սրտի խորքերէն: Եւ շատերը ևս կ'զուրցնն՝ «է՛հ, այս ինչ զպրոց բացուեցաւ, բայց շուտով փակուեցաւ,» այս կասնն, սակայն ուշադրութեամբ չեն մտածիր թէ ինչ էր արգեօք փակուելուն պատճառը. եթէ նաւ մը ծովին մէջ քանի մի հարկաւոր բաներէ զրկուած պլեքներուն խաղաղք լինի, հարկաւ երկար չի դիմանար, վերջապէս առկին անդին տատանուելով կ'խորտակի ու ահագին ջրի անդունդին զոհ կ'ըլլայ. այսպէս և զպրոց մը եթէ միջոց կտաւարութեան չունենայ՝ անօրինական նաւի պէս անյայտ կ'լինի: Շատերուն յայտնի է այն ոսկեղար ժամանակը, յորում մեր բազմաբախտ Թարմանիչք Սահակ և Մեսրոպ զպրոցներ բանալու իղձ ունելով շատ անգամ դիմած են ազգիս մեծամեծներուն և իշխաններու ձեռնառութեանը. տարակոյս չեմ, եթէ այժմ ևս նշն Թարմանչաց սիրովը վառուած անձինք կ'գտնուին տեղ տեղ. ուրեմն պէտք է նոցա զնիխոսս յաջողակ քամին՝ որ նաւերը ծովուն կատաղի պլեքները պատտան գնան:

Գլխաւի Առաջ Կրկանայ Ը աւինեանց  
 Ի 4-ն Մարտի 2871 -ի  
 Ի Գրեթոր-ուղև: